

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և  
ՍՈՑԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՇՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Վայոց Ձորի մարզում գործում են 8(ութ) պետական մասնակցությամբ առողջապահական առևտրային ընկերություններ, որոնց կողմից հիվանդանոցային և առաջնային բուժօգնություն են ստանում մարզի մոտ 52252 բնակիչներ: Բնակչության ստացիոնար բուժօգնությունը հիմնականում իրականացվում է <<Եղեգնաձորի ԲԿ>>, <<Վայքի ԲՄ>> և <<Ջերմուկի ԱԿ>> ՓԲԸ-ների հիվանդանոցներում: Հիվանդանոցներում ծավալված է 85 մահճակալ:

Առողջապահական պետապատվերը տեղադրվել է մարզի բոլոր առողջապահական կազմակերպություններում և իրականացվել է ամբողջովին:

2014թ. գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար նախատեսված է **585 837,4 հազ. դրամ** գումար:

Կատարվել են 38807,1 հազ. դրամի վճարովի բժշկական ծառայություններ, որից 4430.0 հազ. դրամը համավճարի հիմունքներով:

Մարզպետի կողմից պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել մարզի 22 քաղաքացիներ: Ապահովվել է հատուկ հիվանդություններով տառապող անձանց անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրումը, ինչպես նաև սոցիալական խմբերում ընդգրկված անձանց անվճար բուժ.ծառայություններ են մատուցվել մարզի բնակչությանը:

Մարզում իմունականխարգելման աշխատաքները պատվաստման տարբեր տեսակների գծով և նրանց ընդգրկվածությունը կազմում է 99%:

<< կառավարության 2014թ. հունվարի 23-ի N 50 որոշման համաձայն «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայությունները, բացառությամբ ռենտգեն ծառայության, տեղակայվել է բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքում: Ազատվել և << ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանն է հանձնվել «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական մասնաշենքը և դրա օգտագործման ու սպասարկման համար առանձնացված հողամասը:

«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ինֆեկցիոն ծառայությունը տեղափոխվել է «Վայքի բուժական միավորում» փակ բաժնետիրական ընկերություն:

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանն է հանձնվել Աղավնաձորի հիվանդանոցի հին շենքը՝ հետագայում այնտեղ բնակվող 11 ընտանիքներին անհատույց հատկացնելու համար:

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանն է հանձնվել նաև Արենիի հիվանդանոցի հին շենքը:

Կապված մարզի մի շարք գյուղերի բրուցելոզով վարակի հետ աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ մարզային աշխատակիցներին: Թիրախային տնտեսություններում 400 բնակիչներ հետազոտվել են և 45 հայտնաբերված հիվանդներ ստացել են համապատասխան բուժում: Մարզում կանխվել է բրուցելոզի բռնկումը և ընթանում է առողջացման գործընթացը:

Բարձր մակարդակով է անցակցվել ձմեռային գորակոչի զինակոչիկների պրոֆիլակտիկ պատվաստումները:

Ընթացիկ տարում կազմակերպվել է անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգի գործուղման հարցը մարզի բուժօգնականներ: Պայմանագրով Ջերմուկի ԱԿ-ի շտապ օգնության ծառայության և մանկաբարձ-գինեկոլոգիական ստորաբաժանումներ են ուղեգրվել համապատասխան բժիշկ մասնագետներ:

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222 ԱՄ վարկային ծրագրի շրջանակներում մասնագիտական վերապատրաստում են անցել մարզի ԱԱՊԿ օղակի բոլոր թերապևտները, ընտանեկան բժիշկները, մանկաբարձ-գինեկոլոգները և բջջաբանները: Բուժաշխատողները ակտիվորեն մասնակցել են առողջապահության նախարարության կողմից կազմակերպված բոլոր գիտապրակտիկ կոնֆերանսներին և հավաքներին:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 24.02.2014թ թիվ 330-Ա հրամանի Երևան քաղաքի բժշկական կազմակերպությունների կողմից մարզում իրականացվել է արտագնա «Բաց դռների օրեր»:

Կանանց տոնի կապակցությամբ անցկացվել է «Բաց դռների» միամսյակ հանրապետության առաջատար կլինիկաների կողմից՝ «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի,

մանկաբարձության և գինեկուրգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ, «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲԸ, «Ս.Ա.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ, «Վ.Ֆանարջանի անվան Ուռուցքաբանության ԱԿ» ՓԲԸ, հետազոտվել է 259 կին:

Փոխըմբռնման հուշագիր է հաստատվել << Նատալի ֆարմ>> ՍՊԸ <<Մալաթիա>> ԲԿ գլխավոր տնօրենի և << Վայոց ձորի մարզպետի կողմից, որի շնորհիվ հետազոտվել են մարզի 312 բնակիչներ, ինչպես նաև պայմանավորվածության համաձայն <<Մալաթիա>> ԲԿ -ում կկատարվեն անվճար այն լաբորատոր հետազոտությունները, որոնք չեն կատարվում մարզային ենթակայության հիվանդանոցներում, շտապ օգնության կանչերը մարզի համար կկատարվեն զեղչերով:

<<<Հայկական ակնաբուժական նախագծի>> կողմից Վայոց ձորի մարզի անապահով բնակչությանը մատուցվել է անվճար բուժօգնություն և կատարվել են անվճար վիրահատություններ, ինչպես նաև հետազոտված հիվանդներին տրամադրվել են անվճար ակնոցներ:

### ՏԵՂԵԿԱՆՔ

#### Առողջապահության բնագավառում 2014թ. -ին կատարված աշխատանքների մասին

1. Բուժհիմնարկների թիվը	<b>8</b>
• բժշկական կենտրոն	1
• բուժական միավորում	1
• առողջության կենտրոն	2
• առողջության առաջնային պահպանման կենտրոն	4
<b>2. Բուժաշխատողների թիվը</b>	<b>366</b>
այդ թվում՝	
• բժիշկներ	101
• բուժքույրեր	218
• կրտսեր բուժանձնակազմ	47
<b>3. Ստացիոնար ունեցող բուժհիմնարկներում բուժաշխատողների թիվը՝</b>	<b>305</b>
այդ թվում՝	
• բժիշկներ	89
<b>4. Ծնունդների թիվը</b>	
• հիվանդանոցային	<b>495, այդ թվում՝</b>

• Եղեգնաձոր	294
• Վայք	199
• Ջերմուկ	2
• <b>ԶԱԳՍ-ի տվյալներով</b>	<b>645, այդ թվում՝</b>
• Եղեգնաձոր	425
• Վայք	163
• Ջերմուկ	57
<b>5. Մահերի թիվը մարզում ԶԱԳՍ-ի տվյալներով</b>	<b>487, այդ թվում՝</b>
Եղեգնաձոր	323
Վայք	115
Ջերմուկ	49
<b>6. Գրանցված 0-5 տարեկան երեխաների մահերի թիվը</b>	<b>2</b>
• տնային	1
• հիվանդանոցային	1
<b>7. 2014թ. գլոբալ բյուջեն</b>	<b>585 837,4 հազ. դրամ</b>
<b>8. 2014թ. կատարողականը /կատարված բժշկական ծառայություններ/</b>	<b>566 731,8 հազ. դրամ</b>
<b>9. 2014թ. ֆինանսավորումը</b>	<b>566 731,8 հազ. դրամ</b>
<b>10. Վճարովի բժշկական ծառայություններ</b>	<b>38807,1 հազ. դրամ</b>
<b>11. Մահճակալների թիվը</b>	<b>85 այդ, թվում</b>
Եղեգնաձորի բժշկական կենտրոն	45
Վայքի բուժմիավորում	35
Ջերմուկի առողջության կենտրոն	5

**Առողջապահության և սոցիալական  
ապահովության վարչության պետ՝**



**Խ. Գևորգյան**

*[Faint, mostly illegible text and stamps at the bottom of the page, including what appears to be a date stamp '2014.05.14']*